Գ. ԲՐՈՒՏՅԱՆ. Հայագիտություն և մետահայագիտություն. *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2004, 530 էջ:*

Հայտնի է, թե որքան մեծ է ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի դերը հայ փիլիսոփայական մտքի զարգացման գործում: Գիտնականը, հատկապես, հսկայական աշխատանք է կատարել տրամաբանական մտածողության, դրա առանձնահատկությունների ուսումնասիրման ու քննության ուղղությամբ: Տրամաբանության մասին փիլիսոփայի մտածումները լայնորեն արտացոլված են նրա նախորդ աշխատություններում, հատկապես «Դավիթ Անհաղթի ուսմունքը տրամաբանության մասին» հայանի աշխատության մեջ (Երևան, 1980): Տրամաբանության ուսումնասիրման նրա ստեղծած մեթոդաբանությունը համընդհանուր ճանաչման և բարձր գնահատականի է արժանացել աշխարհի փիլիսոփայական շատ դպրոցների նշանավոր ներկայացուցիչների կողմից: Մեծավաստակ հայտգետ-փիլիսոփա ակադ. Ս. Արևշատյանի գնահատմամբ Գ. Բրուտյանի «Դավիթ Անհաղթի ուսմունքը տրամաբանության մասին» մենագրությունը ... նոր խոսք է հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ»[1]:

Եվ ահա, այժմ ընթերցողի սեղանին է ականավոր փիլիսոփայի «Հայագիտություն և մետահայագիտություն» վերնագրով վերջերս լույս տեսած հերթական մեծարժեք աշխատությունը, ուր ամփոփված են խնդրո առարկայի վերաբերյալ տարիների ընթացքում հեղինակի կատարած հետազոտությունների արդյունքները:

Արդի փիլիսոփայական մտքի բարձունքից հեղինակը քննության է առնում հասարակագիտության բնագավառներից մեկի՝ վաղուց կայացած, բայց և հետագա համակարգման ու կայունացման կարոտ հայագիտության և նոր-նոր մեզանում ձևավորվող մետահայագիտության հրատապ խնդիրները: Այդ քննությունը կատարված է հայ ժողովրդի ստեղծագործական մտքի տքնությամբ արարված բազմաբնույթ հոգևոր արժեքների լայն համայնապատկերի վրա: Եվ թեև աշխատության մեջ կատարված ընդհանրացումները փիլիսոփայական են, բայց դրանք իրենց խմաստային ուղղվածությամբ ամուր խարսխված են հայագիտության ոլորտին՝ դրա անմիջական և ամենաբնութագրական առումով:

Գիրքը բաղկացած է երեք բաժնից: Առաջին բաժնում գիտնականն անդրադարձել է հայագիտության բնույթին և արդի խնդիրներին՝ առաջադրելով դրանց լուծման սեփական մեթոդներն ու եղանակները:

Բայց ի՞նչ է հայագիտությունը: Հեղինակի առաջադրած այս հարցն առաջին հայացքից կարող է տարօրինակ հնչել նվազագույնը շուրջ մեկ ու կես հազարամյա պատմագիտական ժառանգություն և միջնադարյան փայլուն պոեզիա ունեցող ժողովրդի ներկայացուցչի ականջին: Բայց տարակուսանքը տեղի է տալիս, երբ հեղինակը կոնկրետ փաստերով ցույց է տալիս, որ հայագիտությունը, ինչպես և ամեն մի կենդանի գիտություն, մշտական զարգացման հոլովույթում կարիք ունի անընդհատ փոփոխության, լրացման ու հարստացման, հետևապես նաև՝ առարկայի ուսումնասիրման մեթոդների կատարելագործման:

Գ. Բրուտյանը տարբերազատում է հայագիտությունն և հայ գիտությունն հասկացությունները՝ դրանք երբեմն տեղադրելով աշխարհագրական տարբեր միջավայրերում: Նա անում է հետևյալ հետաքրքիր գիտարկումը. «Հայ իրականության մեջ ստեղծված հայագիտությունը պատկանում է հայ գիտությանը, իսկ անգլիացու կողմից ստեղծված հայագիտությունը պատկանում է ոչ թե հայ գիտությանը, այլ անգլիական գիտությանը»: Ապա՝ «Հայ գիտության ծավալը ներառում է նաև այնպիսի գիտություններ, որոնք ստեղծվում կամ զարգանում են հայ իրականության մեջ, սակայն հայագիտական բնույթի չեն» (էջ 16):

Աշխատության հեղինակը սահմանում է հայագիտության տեղը գիտությունների

---

[1] *«Պատմա-բանասիրական հանդես», 1986, N 3, էջ 202:*

համակարգում: Նա նկատում է, որ սովորաբար հայագիտությունը (ինչպես նաև ռուսագիտությունը, չինագիտությունը և այլն) սխալմամբ դասում են հումանիտար գիտություններին կամ հասարակական գիտությունների շարքը: Իրականում հայագիտությունն ունի իր ուրույն տեղը, քանի որ այն իր մեջ սինթեզում է և՛ հումանիտար և՛ հասարակական գիտությունների տարրերը և ոչ միայն դրանք:

Գրքում ներկայացված են հայագիտության տարբեր ճյուղերում կիրառվող հետազոտական մեթոդները, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է կատարում իր առջև կանգնած խնդիրները (էջ 47-56):

Օրինակ՝ հայտնի է, որ հայագիտության բաղադրիչներից մեկի՝ պատմագիտության հենման հարթակը փաստն է: Առանց բազմաքնույթ և առավել տիպական փաստերի օգտագործման անհնարին է ստեղծել գիտական պատմություն: Անհնարին է, հատկապես, այն դեպքում, երբ ինչ-որ պատմություն ստեղծվում է եզակի փաստը նկատի առնելով: Միանգամայն իրավացի է հեղինակը՝ գրելով. «Գործը հանգում է անհեթեթության, երբ անդամ մի փաստի հիման վրա այս կամ այն հայագետը հանգում է համընդհանուր նշանակություն ունեցող եզրակացության» (էջ 20): Բայց ոչ միայն եզակի, այլև բազում (նույնիսկ բազում տիպական) փաստերի շարադրանքը դեռ գիտական պատմություն չէ: Նույն փաստի (կամ փաստերի) վրա հենվելով կարելի է տրամագծորեն հակառակ դատողություններ անել, բայց դա չի կարող բավարարել պատմության կողմից ներկայացվող պահանջը, պատմագիտությունն, որի ոլորտում կարող են բարձր արժեքներ ստեղծվել միայն ու միայն եղած փաստական նյութի խոր ու բազմակողմանի վերլուծության միջոցով:

Ելնելով այս իրողությունից, Գ. Բրուտյանը ցույց է տալիս փաստերի, տվյալների, նյութերի հավաքման ու դասակարգման իր մեթոդական-կազմակերպական սկզբունքները և ներկայացնում դրանց վերլուծության ու օգտագործման աբսական-մեթոդաբանական առաջարկները:

Այնուհետև աշխատության հեղինակը քննության է առնում հայագիտական հետազոտություններ կատարելու համար առավել տարածուն մեթոդաբանական մի քանի եղանակներ, ինչպիսիք են, ասենք, հայագիտության մեջ լայն կիրառում ստացած պատմահամեմատական մեթոդը, որը գերազանցապես ուղղված է պատմագիտական նյութին, համեմատական մեթոդը (կոմպարատիվիզմ), որը փաստերի համադրման և երևույթների քննության համար առանձնացնում է գրանցից առավել տիպականներն ու բնութագրականները: Գրքում շեշտված է, որ ճիշտ եզրահանգման համար պատմահամեմատական մեթոդը գործադրող հայագետը պետք է կարողանա անկողմնակալ համադրել ու քննել միմյանց ժխտող փաստերն ու դեպքերը:

Հեղինակի կողմից բերված են այդ պահանջը հաստատող բնորոշ օրինակներ: «Կամ մի դեպք, գուցե և լեգենդ, – գրում է նա, – որ բազմիցս հիշատակվում է տարբեր աղբյուրներում: Այն կոչված էր հաստատելու աստվածների հզորությունը, սակայն ողջախոհ մարդկանց վրա հակառակ տպավորություն է թողնում: Երբ աստծուն չհավատացող Դիագորասին ցույց են տվել տաճարում այն մարդկանց դիմանկարները, ովքեր ուխտելու շնորհիվ փրկվել են վտանգավոր նավարկությունից, հետևել է առաջարկը. «Իսկ այժմ ցույց տվեք այն մարդկանց դիմանկարները, ովքեր զոհվել են ուխտելուց հետո» (էջ 19):

Հայագիտության մեջ գործող մեթոդաբանական հնարներից Գ. Բրուտյանն առանձնացնում է նաև հերմենևտիկան, որը տեքստերի (հատկապես հին) ու վավերագրերի մեկնաբանման արվեստ է և դժվարին արվեստ: Երբ մեկ ճիշտ չհասկացված փաստից (օրինակ՝ տեքստի վնասվածքի պատճառով բառիմաստի սխալ վերծանում և այլն) արվում են տարբեր մեկնաբանություններ, այդ դեպքում ավելորդ է հուսալ, թե կատարվել է երևույթի ճշգրիտ բնորոշում: Հետևապես հայագետից պահանջվում են ոչ միայն բազմակողմանի ու խոր գիտելիքներ, այլև տեքստի խաթարված բառերի վերծանման ինտուիտիվ ունակություն, որը ձեռք է բերվում համեմատական մեթոդի երկարատև կիրառման արդյունքում:

Գրքում կարևոր՝ նշանակություն է տրված տեքստերը մեկնաբանելիս համատեքստային և ենթատեքստային վերլուծությանը: Տեքստում եղած այս կամ այն

բառի իմաստը ճշգրիտ ընկալելու և վերծանելու համար շատ կարևոր է իմանալ ամբողջական տեքստի տրամաբանությունը, բայց շատ դեպքերում դա էլ անբավարար է բառիմաստի իրական բովանդակությունը բացահայտելու ու պարզելու համար: Եվ ահա այստեղ հետազոտող հայագետին պետք է օգնության գա ենթատեքստային վերլուծության արվեստը, որը նույնպես ձեռք է բերվում աևական աշխատանքի փորձով: Միջնադարյան, հատկապես դժվար ըմբռնելի, ձեռագրերի ընթերցման, ուսումնասիրման ու ճիշտ մեկնաբանման բազմաթիվ օրինակներ են տվել հայոց մայր Մատենադարանում աշխատած գիտության բազմաթիվ ադնիվ մշակներ՝ օգտագործելով համատեքստային և ենթատեքստային վերլուծական մեթոդը:

Գրքի հեղինակը տեքստի ուսումնասիրման եղանակներից մեկը համարում է դրանց թարգմանության ընթացքում թարգմանիչ-մասնագետի կողմից թարգմանված տեքստի մանրակրկիտ համեմատումը բնագրի հետ՝ խուսափելու համար բառերի իմաստային սխալ մեկնաբանություններից:

Թարգմանության, որպես տեքստի ուսումնասիրման եղանակի, մասին տեսությունը գրախոսվող գրքի հեղինակի հայտնագործությունն է, որը մեծ հետաքրքրություն է առաջ բերել միջազգային փիլիսոփայական հասարակայնության շրջանում և բարձր գնահատվել: «Գ. Բրուտյանի հետազոտություններում հատուկ տեղ է գրավում իր հիմնադրած նոր ուղղությունը՝ թարգմանությունների տրամաբանությունը», – գրել է նշանավոր ռուս փիլիսոփա Ալեքսեևը[2]:

Իսկ որքա՜ն կարևոր է տեքստ(եր)ի հետազոտությունից օբյեկտիվ եզրակացության հանգելը: Պատահական չէ, որ ակադ. Գ. Բրուտյանը օբյեկտիվ հետազոտության մեթոդին հատկացնում է կարևորագույն դեր: «Ամեն ինչից վեր պետք է լինի ճշմարտությունը», – իրավացիորեն շեշտում է նա, ապա նաև ասում, որ գիտակցված սխալը համարժեք է ստի: Ճշմարտության խեղաթյուրումը հայագիտության մեջ տեղի է ունենում մի կողմից կեղծ հայրենասերների, մյուս կողմից թերահավատների միջավայրում, երբորդ դեպքում երբ հայագիտությունը և ընդհանրապես գիտությունը քաղաքականացվում է:

Օբյեկտիվությունից, որպես հետազոտության մեթոդաբանական հնարից, խորշող հայագետը (նաև քաղաքագետը, հրապարակախոս-մեկնաբանը և այլք) գիտակցաբար, թե անգիտակցաբար ճշմարտությունը տանում է դեպի փակուղի, որից դուրս գալու համար իրավ հայագետներից, և ընդհանրապես երևույթներն անկողմնակալ գնահատելու կողմնակիցներից, պահանջվում են հսկայական ջանքեր:

Մեր կողմից հավելենք, որ կեղծ հայրենասիրությունը խանգարում է երևույթների ճիշտ ընկալմանը, իսկ թերահավատությունը սեփական ազգի պատմության ու մշակույթի, ընդհանրապես նրա հնարավորությունների նկատմամբ ուղղակի հարվածում է այդ ազգի արժանապատվությանը, ստարների մոտ թյուր կարծիք ստեղծում նրա մասին: Այդ տեսակետից հատկապես բնորոշ է ամերիկյան այսպես կոչված «հայագիտական դպրոցը», որն իր կատարած «հետազոտություններով» հսկայական ավերներ է գործում հայագիտության մեջ, դրանով իսկ ջուր լցնում հայոց պատմության նենգափոխումը տասնամյակներ ի վեր արհեստ դարձրած թուրք և ադրբեջանցի պատմաբանների ու քաղաքագետների ջրաղացին:

Օբյեկտիվության մեթոդին անմիջականորեն հարակցված է ապացուցողական մեթոդը, որը հակադրված է ելակետային սխալ դրույթների վրա հենված ամեն տեսակի գեկլարատիվ հայտարարություններին:

Այնուհետև գրքի հեղինակն անցնում է հայագիտության և մետահայագիտության փոխհարաբերությունների ու փոխկապակցությունների հարցի քննությանը: Նշենք, որ «մետահայագիտություն» տերմինը հայագիտության մեջ առաջինը մուծել է ինքը՝ Գ. Բրուտյանը՝ իր նախորդ մի շարք աշխատություններում, իսկ գրախոսվող սույն հետազոտության մեջ սպառիչ վերլուծության է ենթարկել դրա կազմվածքը, պարզել արդյունավետության հնարավորությունները և այլն: Եթե տարբեր ճյուղեր ունեցող գիտությունը կոչված է ուսումնասիրելու

[2] Տե՛ս П. В. Алексеев. Философы России XIX-XX столетий. Биографии, идеи, труды. М., 1999, с. 140.

բնության ու հասարակության զարգացման օրինաչափությունները, ապա մետագիտությունը յուրօրինակ միջոց է այդ ճյուղերից յուրաքանչյուրի բնույթն ու կառուցվածքը, նրա ընդգրկման սահմանները հետազոտելու, գիտությունների համակարգում ունեցած տեղը ճշտելու համար: Հեղինակը գտնում է, որ մետագիտություն կարող է ունենալ ցանկացած գիտություն (ֆիզիկան՝ մետաֆիզիկա, քիմիան՝ մետաքիմիա, կենսաբանությունը՝ մետակենսաբանություն և այլն), բացի փիլիսոփայությունից: Միանգամայն ճիշտ գիտարկում է, քանզի, մեր կարծիքով, ինքը փիլիսոփայությունը մյուս գիտությունների անջատվելուց ի վեր, որոշ բացառություններով հանդերձ, վերածվել է բնության ու հասարակության մեջ գործող օրինաչափությունների ուսումնասիրության մեթոդի: Գալով հայագիտությանը, այն նույնպես գիտություն է, իսկ մետահայագիտությունը՝ բուն հայագիտության ուսումնասիրման մեթոդ:

Գ. Բրուտյանի աշխատության մեջ տրված հայագիտության և մետահայագիտության սահմանումները հետազոտողներին հնարավորություն են ընձեռում ստեղծել հայագիտության և մետահայագիտության զանազան մոդելներ (կաղապարներ):

Աշխատության երկրորդ բաժինը նվիրված է միջնադարյան հայ խոշորագույն փիլիսոփա Դավիթ Անհաղթին (V-VI դդ.), հատկապես տրամաբանության մասին նրա ուսմունքին: Գ. Բրուտյանը Դավիթ Անհաղթի գիտական ժառանգության ուսումնասիրությանը ձեռնարկել է քառորդ դար առաջ և հետագա տարիներին երկնել է բազում արժեքավոր աշխատություններ, որոնցում խորազնին քննության է առել փիլիսոփայի մեզ հասած բոլոր չորս գործերը՝ «Փիլիսոփայության սահմանումները», «Պորֆյուրի «Ներածության» վերլուծությունը», «Արիստոտելի «Կատեգորիաների» մեկնությունը» և «Արիստոտելի «Անալիտիկաների» մեկնությունը», ապա իրեն բնորոշ բարեխիղճ գննությամբ առանձին-առանձին բացահայտել դրանց իմաստային արժեքը և թողած խոր ազդեցությունը ժամանակաշրջանի և հետագա դարերի հայ փիլիսոփայական մտքի զարգացման վրա, կատարել իր ուրույն մեկնաբանություններն ու եզրահանգումները:

Ակադեմիկոսի անուրանալի ծառայություններից մեկն այն է, որ տիրապետելով գրաբարին, մեծ ճշգրտությամբ վերծանել է Դավիթ Անհաղթի երկասիրություններում 1500 տարի առաջ գործածված փիլիսոփայական շատ բառերի ու տերմինների իմաստային նշանակությունը և փոխանցել արդի փիլիսոփայական տերմինաբանական կազմին: Դավիթ Անհաղթի գիտական ժառանգության տարիների ուսումնասիրության առավել կարևոր արդյունքները հեղինակը առանձնացրել և զետեղել է գրախոսվող աշխատության մեջ:

Մեր օրերին համահունչ են հայ մեծ փիլիսոփայի մտքերից ու եզրահանգումներից շատերը: Գ. Բրուտյանը շեշտադրում է հեռավոր ժամանակներում Դավթին հուզած և այսօր էլ մեզ շատ հուզող այնպիսի հարց, ինչպիսինը բարոյականության տեսանկյունից դիտարկված մարդու պրոբլեմն է՝ իր անբաժանելի հատկանիշներով հանդերձ՝ բարություն, առաքինություն, ազնվություն, համեստություն, ընտանեկան սրբություններ նկատմամբ նախանձախնդիր վերաբերմունք և այլն: Դրանք խիստ այժմեական են հատկապես համամարդկային և ազգային բարոյական արժեքների խաթարման ներկա ժամանակներում, երբ հասարակության մեջ հոգևոր շատ արժեքներ, ցավոք, նսեմանում են նյութականի անսանձ պաշտամունքի առջև՝ ցավ, խռովք, վրդովմունք առաջ բերելով մեր սրտում:

Դավիթ Անհաղթի մեզ հասած աշխատություններում քննության են ենթարկված գոյաբանության, իմացաբանության, բարոյագիտության, պեղագիտության հարցեր, բայց մեծ փիլիսոփայի գիտական ժառանգության գլխավոր բովանդակությունը տրամաբանության մասին ուսմունքն է: Գ. Բրուտյանը այդ բոլոր հարցերը լուսաբանում է համապարփակ ամբողջության մեջ:

Աշխատության հեղինակի կողմից Դավիթ Անհաղթի որոշ մտքերի մեկնաբանությունից հետևում է, որ ժամանակի հայ խոշոր գիտնականը, գաստիարակված լինելով հանճարեղ Արիստոտելի աշխարհըմբռնման ավանդույթներով, ինքը նույնպես կոնկրետ նյութը դիտարկում էր անվերջանալիության չզթայի մեջ, գրելով. «Ճանաչումը չի կարող սահման ունենալ, երբ անսահման է

բնությունը» (էջ 82): Այս միտքը նրա աշխարհայեցողությունը սնող հիմնական երակն էր՝ Այո, անվերջ ու անսահման է մատերիան, ինչպես անսահման են տարածությունն ու ժամանակը: Մարդկային միտքը այդ անսահմանության մեջ, ի հեճուկս կրոնական սմեն տեսակի դոգմաների և տերտերականության, վնտրում և գտնում է թվով անսահման նորանոր երկնային համաստեղություններ, գալակտիկաներ, մետագալակտիկաներ, որով և կրկին ու կրկին հերքվում են բնության անճանաչելիության սկեպտիցիզմի և ագնոստիցիզմի քարոզները:

Միանգամայն արդարացված է Գ. Բրուտյանի գնահատականը, թե շրջապատող աշխարհի անճանաչելիության դեմ Դավիթ Անհաղթի մղած պայքարը «սխրագործություն էր, որի արդյունքը դժվար է գերագնահատել» (էջ 83): Հիրավի, միայն «անսահման է բնությունը» դավիթանհաղթյան բառակապակցությունը բավական էր, որպեսզի մեծ փիլիսոփային ապահովեր իր արժանի տեղը հայոց մեծերի պանթեոնում:

Աշխատության մեջ բազմակողմանիորեն քննված է Դավիթ Անհաղթի գիտական ժառանգության հիմնական բաղադրիչը՝ արամաբանության մասին ուսմունքը, ուր, հեղինակի դիտարկման համաձայն, նկատելի է մետագիտության գաղափարը: Որպես իր տեսակետի վկայություն, նա գրում է. «Քննարկելով Պորֆյուրի «Ներածություն» վերնագրի խնդիրը, Դավիթ Անհաղթը հատկապես նշում է, որ հեղինակն իր գործը «Ներածություն» է անվանել և ոչ թե՝ «Ներածության մասին» («Ցաղագս Ներածութեան»), քանի որ առաջին դեպքում նկատի ուներ մի ինչ-որ առարկա, իսկ երկրորդ դեպքում մի ինչ-որ բան այդ առարկայի մասին՝ «... զի «Ներածութիւնն» իսկապես ինքն իսկ զիրն նշանակե, իսկ «Ցաղագս Ներածութեան» որպես թե այլ ինչ իր յաղագս նորա պատմե»[3]: Այս դեպքում ևս ակնհայտ է մետահետազոտության գաղափարը» (էջ 97):

Հավելենք, որ գիտնականը բացահայտել է հայոց առաջին պատմիչների ստեղծագործությունների հետ Դավիթ Անհաղթի փիլիսոփայական երկասիրությունների կապերն ու առնչությունները:

Հեղինակն այնուհետև վերլուծում է (էջ 107-269) Դավթի աշխատություններում քննություն առնված մտքի այնպիսի ձևերը, ինչպիսիք են՝ հասկացությունն իր բազմազան դրսևորումներով, սահմանման և բաժանման մասին ուսմունքը, դատողության տեսությունը, մտահանգման մասին ուսմունքը, մտածողության օրենքների պահանջները և այլն:

Նկատի առնելով միջնադարյան հայ խոշորագույն փիլիսոփայի տրամաբանության մասին ուսմունքի հետազոտման և այն ըստ պատշաճի աշխարհին ներկայացնելու ուղղությամբ ակադ. Գ. Բրուտյանի կատարած մեծ աշխատանքը, ռուս հայանի փիլիսոփաներից Ն. Ի. Ստյաժկինը գրել է. «Մեր առջև լուրջ հիմնարար հետազոտություն է՝ նվիրված Դավիթ Անհաղթի տրամաբանական ստեղծագործությանը: Հեղինակին հաջողվել է լուծել բոլոր կարևոր հիմնահարցերը. առաջին, տալ հին հայկական փիլիսոփայության դասականի տրամաբանական հայացքների գրեթե սպառիչ վերլուծությունը և, երկրորդ, ուրվագծել հուսադրիչ մեթոդաբանական ուղի արիստոտելագիտության զարգացման որոշ դժվարությունների հաղթահարման համար: Դրանով իսկ Գ. Բրուտյանի կողմից նոր արժեքավոր բաժին է դրանցվել տրամաբանության համաշխարհային պատմության մեջ»[4]:

Աշխատության երրորդ բաժինն ամբողջովին նվիրված է թարգմանչական արվեստին՝ տրամաբանության հայեցակետից (էջ 270-418): Ինչպես վերը նշել ենք, Գ. Բրուտյանը թարգմանությունը չի դիտում լոկ որպես մի լեզվից մյուսին փոխադրած տեքստ, այլ նաև համարում է տեքստի ուսումնասիրման եղանակ: Որպես գիտնական և որպես հայ մարդ նա հպարտ է, որ իր ժողովրդի պատմության մեջ եղել է թարգմանչաց հզոր շարժում և որ թարգմանչական արվեստը շատ ժողովուրդների չէ, որ այնքա՜ն հոգեհարազատ է, ինչպես հայ ժողովրդին:

Այս բաժնում հեղինակի արտահայտած մտքերը միանգամայն նոր մոտեցում են

---

[3] *Դ ա վ ի թ Ա ն հ ա ղ թ. Երևան, 1976, էջ 22, 1980, էջ 116:*

[4] *Տե՛ս* "Вестник общественных наук" АН АрмССР, 1983, №10, с. 96.

թարգմանչական արվեստին ընդհանրապես, հայ թարգմանչական արվեստին՝ առանձնապես:

Գրքում զետեղված են հավելվածներ (հարցազրույցներ հայագիտության հարցերի շուրջ, հեղինակի հայագիտական աշխատությունների ցուցակը), ծանոթագրություններ (որոնք նվիրված են հայագիտության բնույթին և խնդիրներին), օգտագործված տարբեր լեզուներով գրականության ընդարձակ ցանկը:

Ամփոփենք: Ակադեմիկոս Գ. Բրուտյանի «Հայագիտություն և մետագիտություն» աշխատությունը վերջին տարիների մեր ազգային հոգևոր կյանքի ամենանշանակալի երևույթներից մեկն է, խոշոր ներդրում հայագիտության փիլիսոփայական իմաստավորման գործում, սեղանի գիրք՝ հայագետ գիտնականների համար:

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ